

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ՝
ՌԻՂՂՈՒԱԾ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ
ԳԱՐԵԳԻՆ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

15 Ապրիլ 1994

Սիրելի Վեհափառ Տէր,

Մեծ ուրախութեամբ տեղեկացանք, որ ձեր բարձր անձնաւորութեան հովանաւորութեամբ պիտի կատարուի Ռուբէն Սեւակի անուան Մատենադարանի բացումը:

Ձեր հայրական այս կեցուածքը մեզ համար անմոռանալի պիտի մնայ:

Մեզի համար մեծ հրճուանք է, Ռուբէն Սեւակի Մատենադարանին բացման օրը, եւ 24 Ապրիլի նախօրեակին, տեսնել միացեալ ներկայութիւնը Պէյրութի Հայութեան:

Մենք վստահ ենք, որ Ռուբէն Սեւակի հոգին ուրախութեամբ պիտի լեցուի:

Դժբախտաբար, ես եւ Իրման չի կարողացանք այս հանդիսութեան ներկայ ըլլալ, Իրմային անհանգստութեան պատճառաւ:

Ի փոխարէն ներկայ պիտի ըլլայ Ռուբէն Սեւակի աղջիկը՝ Շամիրամ Սեւակը, որ մինչեւ հիմա ձեզի ճանչնալու բախտը չէր ունեցած:

Սիրելի Վեհափառ Տէր,

Մեր երախտագիտութիւնը եւ խորին շնորհակալութիւնները կը յայտնենք ձեզի:

15 Ապրիլ 1994
Cagnes-sur-Mer

Յ.Գ. - Այս նամակը Շամիրամ Սեւակի միջոցաւ կը փոխանցեմ, որ
օդանաւով Պէյրութ կը մեկնէր:

3.2.